խանք երկուց աղգաց յանդիման եղեն Մեծի ատենին՝ և բազմեցան ըստ կարգի, իսկ բազմութիւն ժողովրդոց ընդ Պատրիարքին մնացին 'ի Հասան Փաշա խանն։

Նիստ Առաջին, (12 Օգոստոսի)։

Նախ հարցին Դատաւորքն ցՀայս, զի՞նչ է վէճն ձեր ընդ Ցունաց, եւ զիա՞րդ համարձակեցայք տալ գիր վերբստին առ Արքայ։ Պատասխանի ետուն Հայք և ասեն. Ոչ ինչ ունիմք ընդ Ցոյնս, բայց միայն խնդրեմք 'ի Տէրութենէ դատ առնել արդարութեամբ ընդ մեզ և ընդ Ցոյնս, որք գաղտնի ստութեամբ եւ անիրաւութեամբ խաբեալ զՏէրութիւնն առեալ են հրովարտակ, 'ի դէպ ժամանակի յափշտակել զՀայրենի ժառանգութիւնս մեր՝ և զրկել զմեզ 'ի բնակութեանց մերոց, որոյ վասն աղաչեմք շնորհել մեզ զսեփհական ժառանգութիւնս մեր։ Հարցին ցՑոյնս, զի՞նչ ունիք առ այս պատասխանի, նոքա ասեն՝ ամենայն բանից նոցա ունիմք մի մի հրովարտակս, զի բովանդակ վանօրայք և բնակութիւնք, որք են այժմ 'ի ձեռս Հայոց՝ 'ի բնէ մեր են, և չունին նոքա տեղի ինչ յատկացեալ։ Պատասխանի ետուն Հայք՝ հարցէք զՑոյնս թէ զո՞ն յերուսաղէմ միաբանութիւն յազգէն Հայոց, ո՞ւր բնակին և քանի՞ ամ է։ Ցոյնք ասացին, Այո՛ զոն անդ միաբանք, բայց հիւր են մեզ, և վասն լինելոյ նոցա հպատակ և հարկատու Տէրութեան, խնամս տանիմք և յարգանօք նստուցանեմք 'ի բուն տեղիս մեր։ Ժպտեալ ընդ այս Դատաւորաց՝ ասեն, ո՞րպիսի հիւր իցէ այդ, որ ունի հիւրանոց և ըստ հաճութեան և կամաց իւրոց բազմութեամբ ուխտաւորաց և միաբանաց համարձակ և անկախ յումեքէ բնակի անդ, միթէ հնա՞ր իցէ այդմ լինել։

Հարցին Դատաւորք՝ ո՛ւր են բնակութիւնք և վանօրայք ձեր, քանի՛, և զի՞նչ անուանք նոցա։ Հայք ասացին՝ 'ի թաղն Սիոնի մեծ վանքն Ս. Յակոբայ (Մայր Եաղուպ) ուր բնակի ցարդ Պատրիարքն մեր միաբանութեամբ եւ ուխտաւորօք. ասա մի առ մի պատմեցին զսեփհական վանօրայս և զրաժանորդ տեղիս Հայոց։ Այլ իբրեւ դժկամակ եղեն Ցոյնք վասն ումանց տեղեաց տաճարին Ս. Յարութեան, յայնժամ մատուցին Հայք զյատակագիծ տաճարին,